18.06.2013թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

*ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

*Սիրելի՛ բուժաշխատողներ*

Շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի կապակցությամբ և մաղթում, որ Ձեր պատասխանատու աշխատանքի կատարելագործումը մշտապես նպաստի մեր ազգաբնակչության առողջության լիարժեք պահպանմանը:

Բուժաշխատողի առաքելությունը հասարակության կողմից մշտապես ընկալվել է որպես ամենապատասխանու և ամենազգայուն գործունեություն, որի հիմքում դրված է մարդու առողջության համար բժշկի կողմից կիրառվող խորը մասնագիտական և հաճախ էլ անձնուրաց հմտությունների կիրառումը:

Համոզված եմ, որ Հիպոկրատի երդումը յուրաքանչյուրիդ հոգում է, ուղեկցում է Ձեզ ողջ գիտակցական կյանքի ընթացքում և նպաստում է Ձեր կողմից ցուցաբերվող յուրօրինակ մարդասիրական որակների դրսևորմանը:

Բուժաշխատողի օրվա կապակցությամբ շնորհավորելուն զուգահեռ՝ վստահ եմ, որ համակարգում ներդրվող բարեփոխումները, Ձեր անմիջական մասնակցությամբ, առաջիկայում կունենան իրենց ցանկալի արդյունքները և կնպաստեն առողջապահական համակարգի առավել արդյունավետ գործունեությանը:

Կրկին շնորհավորում եմ ու ցանկանում Ձեզ ուժ, եռանդ, անկոտրում կամք և ամենայն բարիք:

*Հարգանքներով*

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ